

«ՏԵԱՌԵԼՆԱՊԱՋԸ»՝ ԸՍՏ ԹՈՐՈՍ ՌՈՍԼԻՆԻ

(խորհրդարանական մանրամասներ)

Անտ Անտիսես

Եկեղեցական կերպարուեստի ակունքը Աստուածաշունչ մատեանն է՝ միջնադարի արուեստագէտին ուղղութիւնն եւ ստեղծագործական ներշնչանք տուող աստուածային յայտնութիւնը: Դեռեւս քրիստոնէութեան արշալոյսին, երբ Աւետարանը նոր էր քարոզուում եւ նոր-նոր կազմաւորուում էր Եկեղեցին, կարիք զգացուեց նոր արուեստի, որտեղ խօսքն ու պատկերը, փոխադարձաբար լրացնելով իրար, պիտի կազմէին անքակտելի միութիւն: Այդպէս գրաւոր խօսքը՝ Սուրբ Գրքի տնօրինական պատմութիւնները, ոչ միայն գծագրուեցին պատկերի ու գոյնի մէջ, ոչ միայն դարձան տեսանելի, այլեւ մեկնաբանուեցին պատկերագրական բոլոր հնարաւոր արտայայտչամիջոցներով եւ խորհրդանշանի լեզուով: Բայց պատկերը, ծնունդով խօսքից, պէտք է խօսքով էլ հասկանալի դառնար: Այդ պատճառով էլ միջնադարի արուեստագէտները, Ս. Գրքին զուգահեռ, մեծապէս օգտուում էին նաեւ Եկեղեցու սրբազան աւանդութիւնից, մեկնողական գրականութիւնից, նաեւ պարականոն ու աւանդազրոյց գրուածքներից, յատկապէս՝ երբ լուծում էին տեսական խնդիրներ: Տեսութեան եւ պրակտիկ ստեղծագործութեան արդիւնքում էլ Ընդհանրական Եկեղեցում հիմնաւորուեցին աստուածաշնչեան թեմաների պատկերագրական-պատկերաստեղծական կանոնները, առանց որի Հնարաւոր չէ պատկերացնել Եկեղեցական արուեստը: Դրա առաւել ակնառու օրինակը միջնադարեան մանրանկարչութիւնն է, որտեղ խօսքն ու պատկերը իրար կողքի են՝ համադրուած ձեւագիր մատեանում:

Տէրունական մանրանկարներում իր ուրոյն տեղն ունի «Տեառնընդառաջը», որի վաղագոյն պատկերումները քրիստոնէական արուեստում ի յայտ են եկել Երբեք եւ հասել պատկերագրական մշակութեան թ-ժ դարերում: Իսկ Հայկական մանրանկարչական արուեստում «Տեառնընդառաջի» առաջին պատկերները յայտնի են Ժ-ԺԱ դարերից<sup>1</sup>:

«Տեառնընդառաջի» գրական հիմքը Ղուկասի Աւետարանն է<sup>2</sup>: Մարիամն ու Յովսէփը քառասուն օրական Յիսուսին բերում են Երուսաղէմի տաճար, որպէսզի կատարեն Մովսէսական Օրէնքի պատուիրանը: Ամէն արու գաւակ, որ արգանդ է բացում, Տիրոջ համար սուրբ պիտի կոչուի: Եւ Տիրոջ Օրէնքում ասուածի համաձայն՝ ընծայ պէտք է տալ մի զոյգ տատրակ կամ աղաւնու երկու ձագ<sup>3</sup>: Երուսաղէմում ապրող մի արդար ու աստուածավախ<sup>4</sup> մարդ, որն ակնկալում էր Իսրայէլի մխիթարութիւնը, Սուրբ Հոգով առաջնորդուած, գալիս է տաճար, քանի որ նրան հրամայուած էր մահ չտեսնել, միգչել որ տեսնէր Տիրոջ Օծեալին<sup>5</sup>: Նրա անունն էր Սիմէոն: Սուրբ Հոգով լցուած Սիմէոնը գիրկն է առնում մանուկ Յիսուսին ու ասում. Այժմ, ո՛վ Տէր, խաղաղութեամբ արձակիր Քո ծառային՝ ըստ Քո խօսքի, որովհետեւ աչքերս տեսաւ փրկութիւնը Քո, որ պատրաստեցիր բոլոր ժողովուրդների առաջ՝ լոյս, որ կը լինի յայտնութիւն հեթանոսների հա-

1 И. Р. Драмбян, Торос Рослин, Ереван, 2000, с. 114  
 2 Ղուկ., Բ 21-40  
 3 Ղուկ., Բ 23-24  
 4 Ղուկ., Բ 25  
 5 Ղուկ., Բ 26

մար եւ փառք՝ Իսրայէլի Քո ժողովրդի համար<sup>6</sup>: Սիմէոնը օրհնում է Յիսուսի ծնողներին ու, դիմելով Մարիամին, ասում. Ահա սա նա է, որ պատճառ է դառնալու Իսրայէլի մէջ շատերի անկման ու բարձրացման եւ Աշխատեալի հակառակութեան: Իսկ քո հոգու միջով էլ սուր պիտի անցնի, որպէսզի բազում արտերի խորհուրդներ յայտնի դառնան<sup>7</sup>:

Տաճարում էր նաեւ Աննա մարգարէուհին, որն ութսունչորս տարեկան այրի կին էր: Նա չէր հեռանում տաճարից եւ աղօթքով ու ծոմապահութեամբ գիշեր-ցերեկ ծառայում էր Աստծուն: Աննան եւս գոհուած էր յայտնում Աստծուն: Նա խօսում էր Մանկան մասին բոլոր Արանց հետ, որոնք Երուսաղէմի փրկութեանն էին սպասում: Համառօտ այսքանն է Ղուկաս աւետարանի պատմածը:

1262 թուականին Հայկական մանրանկարչութեան վարպետաց վարպետը՝ Թորոս Ռոսլինը, կաթողիկոսանիստ Հռոմկլաւամրոցում Հայոց Կոստանդին Ա Բարձրաբերդցի կաթողիկոսի եղբօր որդու՝ Թորոս բերդցի կաթողիկոսի եղբօր որդու՝ Թորոս քահանայի պատուէրով գրեց եւ նկարաքահանայի պատուէրով գրեց եւ նկարաքահանայի պատուէրով գրեց 211ա-ում «Տեառնընդառաջ» մանրանկարն է:

Մանրանկարի կենտրոնում ոսկէ խորքի վրայ, վեր է յառնում Երուսաղէմի տաճարն ակնարկող խորհրդանշական կառոյցը, որի քառասուն, քառախոյնակ վերջը, որի քառասուն է չորս կամարներով, նամասը պսակում է չորս կամարներով իսկ հորիզոնական-ուղղանկիւն տանիքին (թւում է, թէ դուրս է ելնում) մի եռանկիւն (թւում է, թէ դուրս է ելնում) մի եռանկիւնի է՝ կենտրոնում վեցթեւանի աստղ: Տանիքի տակից կախ է ընկած երեք ճրագակալ: Տաճարի ներքին տարածքը (խորքը) կապոյտ է:

6 Ղուկ., Բ 29-32  
 7 Ղուկ., Բ 34-35  
 8 Ղուկ., Բ 38  
 9 Սերաստիայի Աւետարան, Բալթիմոր, Ուոլթերս պատկերասրահ (539)

Տաճարից ցած՝ մանրանկարի ստորին մասում, քառակողմ զոհասեղանն է, որը դրուած է վարից վեր նեղացող եռաստիճան երկնագոյն պատուանդանին: Զոհասեղանը ծածկուած է սպիտակ (տեղ-տեղ դեղնաւուն) կտորով, որը զարդարուած է յուշկապարիկների պատկերներով: Յուշկապարիկները ամփոփուած են երկերից շրջանակների մէջ: Զոհասեղանի վրայ խաչազարդ գիրք է պատկերուած, որը ծածկուած է թափանցիկ ծիրանի քողով: Տաճարն ու զոհասեղանը Թորոս Ռոսլինը ներկայացրել է Համապատասխան՝ Հակառակ Հեռանկարի սկզբունքին:

Մանրանկարի աջ մասում Մարիամն ու Յովսէփն են, ձախում՝ Սիմէոնն ու Աննան: Մարիամը մանուկ Փրկչին յանձնում է Սիմէոնին, ով, երկիւղածօրէն իր գիրկն ընդունելով Տիրոջը, ձեռքերը ծածկել է թաշկինակով: Ընդ որում, Սիմէոնն ու Մարիամը, կարծես, քայլ են անում իրար ընդառաջ. թեքուել են զոհասեղանի վրայ, քանի որ վերջինս ուղիղ Յիսուսի ոտքերի տակ է:

Մարիամի ետեւում Յովսէփն է: Ձեռքերի մէջ պահել է զոհաբերութեան Համար նախատեսուած տատրակներ: Սիմէոնի ետեւում Աննան է: Նրա ձախ ձեռքին բացուած գալարափաթեթ է, իսկ աջ ձեռքն ուղղուած է վեր՝ դէպի տաճարի եռանկիւնին: Մեծ մանրանկարչի վրձնած կերպարներում առաւել արտայայտիչը նրանց դէմքերն են՝ գեղեցիկ, խոհական, առինքնող, սոգորուած դրամատիկ շնչով: Նրանք բոլորը լուսապսակով են (Յիսուսինը՝ խաչազարդ) եւ աւանդական Հագուստով՝ քիտոն եւ թիկնոց (Յիսուսի թիկնոցը ծիրանի է), գլխաշոր (Մարիամ եւ Աննա): Տարբերութիւնը Հանդերձի գոյների մէջ է: Մանրանկարի յորինուածքային եւ գաղափարական կենտրոնը տաճար-մանուկ Յիսուս-զոհասեղան ուղղահայեաց առանցքն է: Այդ առանցքին ստորադաս է Մարիամ-





էլ յայտնուում է գերութեան մէջ: Սակայն Տէրն, իր մեծ ողորմածութիւնից զրդուած, փրկում է գերութիւնից իր ժողովրդին, հարուածում եւ կործանում է հեթանոսներին ու նրանց քաղաքները: Ահա Բաբելոնի եւ Եդոմի աւերակներում էլ, որպէս աւերումի եւ մահուան նշանակ, բնակուում են յուշկապարիկները:

Բայց, այնուամենայնիւ, տարօրինակ ու անհասկանալի է տեսնել Երուսաղէմի տաճարի զոհասեղանին պատկերուած յուշկապարիկներին: Ի՞նչ առնչութիւն կարող է ունենալ հեթանոսական դիցաբանութիւնից վերցուած կէսկին-կէսթուռու ճիւղաղ Յիսուս Քրիստոսի տնօրինութիւններից մէկին վերաբերող մանրանկարի հետ: Պարզուում է՝ ունի:

Յուշկապարիկ երեւակայական կենդանին, ըստ հեթանոսական առասպելաբանութեան, բնակուում է ծովում կամ աւերակներում եւ նոյնական է յունական դիցաբանութեան սիրենային: Յուշկապարիկ սիրենաները, գայթակղելով մարդկանց քաղցրահունչ երգերով, կործանում են նրանց, սպանում եւ տանում խաւարի ստորերկրեայ թագաւորութիւն, այլ խօսքով՝ դժոխք: Սիրենան մահուան խորհրդանիշն է<sup>32</sup>: Պատահական չէ, որ անտիկ շրջանի գերեզմանաքարերին շատ յաճախ կարելի է հանդիպել դրանց պատկերներին: Սակայն հետագայում, մասնաւորապէս՝ միջնադարեան արուեստում, սիրենախորհրդանիշը, կրելով որոշ քրիստոնէական-իմաստային ազդեցութիւններ, փոխակերպուեց դրախտահաւքի՝ սերենայի, կոյս թուչնի, որը իջնում է դրախտից երկիր եւ հիացնում մարդկանց իր երգով<sup>33</sup>: Եւ, քանի որ դրախտը կեանքի խորհրդանիշն է, ուրեմն «Տեառնընդառաջի» մանրանկարում

ընդ յուշկապարիկի խորհրդանշական իմաստը երկուսն է՝ էապէս իրար հակադիր հասկացողութիւններ՝ մահ եւ կեանք, դժոխք եւ դրախտ: Անշուշտ, միջնադարի արուեստագէտը քաջատեղեակ էր յուշկապարիկների երկակի նշանակութեանը:

Զոհասեղանին խաչազարդ գիրք է դրուած եւ ծածկուած է թափանցիկ ծիրանի քողով: Գիրքը, որպէս խորհրդանշան, պատկերազրուութեան մէջ աստուածային յայտնութեան խորհուրդն ունի, իսկ երբ խաչազարդ է, ապա խորհրդանշում է հաւատը<sup>34</sup>: Ուրեմն, այս խորհրդանշանի նախնական իմաստն է՝ յայտնութիւն եւ հաւատ: Սակայն գիրքը քողածածկ է: Այդ քողը նշանակն է Հին Ուխտի ստուերակերպութեան, որտեղ տարբեր օրինակներով թաքնախորհուրդ ծանուցուում է Մեսիա-Փրկչի ինչպիսին լինելը: Մասնաւորապէս, Փրկչի գալուստով եւ քաւարար մահուամբ՝ խաչելութեամբ, կ'իրականանայ տնօրինական անցումը մահուանից դէպի կեանք, դժոխքից դէպի դրախտ: Այս են ակնարկում գրքի վրայի խաչն ու մանուկ Յիսուսի խաչազարդ լուսապսակը: Այդ զոհաբերական մահուան խորհրդանիշն է բուն զոհասեղանը եւ նրա եռաստիճան պատուանդանը, որը խորհրդանշում է Գողգոթայի բարձունքը: Եսային, կանխասելով Մեսիա-Փրկչի խաչելութիւնը, գրում է. Նա խոցուեց մեր մեղքերի համար եւ մեր անօրէնութիւնների համար դատապարտուեց. մեր խաղաղութեան համար Նա պատիժ կրեց, եւ Նրա վերքերով մենք բժշկուեցինք: ...Ինչպէս ոչխար՝ Նա մորթուելու տարուեց, եւ, ինչպէս գառ, անմոռն կանգնած է խուզողների առաջ...<sup>35</sup>:

Յիսուսը գալիս է տաճար, որպէսզի կատարուի Օրէնքը, որը զոհ է պահանջում: Այդ նպատակով տաճար է բերում

32 В. Бауер, И. Дюмоц, С. Головин, Энциклопедия символов, Москва, 1995, с. 171

33 Мифы народов мира, т. второй, Москва, 1982, с. 438


34 Д. Тресндлер, 62. աշխ., էջ 146  
35 Ես., ԾԳ. 5, 7

երկու տատրակ: Սակայն մանրանկարի խորհրդաբանութիւնը այլ բան է ասում: Զոհը ինքը Յիսուսն է: Աւելին, Նա ոչ միայն զոհաբերուողն է, այլեւ զոհ մատուցողը: Մեսիական ծառայութեան այս կողմը վերաբերում է Յիսուսի Բահանայապետ լինելուն: Ծատ քահանայներ եղան, որովհետեւ մահը արգելք էր լինում, որ Արամք տեսապէս քահանայ մնան: Իսկ սա (Յիսուս Քրիստոսը - Ա. Ա.), յաիտեմակամ լինելու պատճառով, ունի անանց քահանայութիւն: ...Ինչպէս այլ քահանայապետեր՝ պէտք չունի նախ իր մեղքերի համար զոհեր մատուցելու եւ ապա՝ ժողովրդի մեղքերի համար. իսկ Քրիստոս մէկ անգամ առ միշտ կատարեց այդ բանը, քանի որ ինքը իրեն պատարագ մատուցեց: ...Քրիստոս ոչ թէ ճշմարտութեան օրինակ եղող ձեռակերտ սրբարանը մտաւ, այլ՝ բուն իսկ երկինքը... ոչ էլ Առիստոտելի եւ զուարակների արիւնով, մի անգամ ընդմիջտ իր իսկ արեամբ մտաւ սրբարան՝ յաիտեմակամ փրկութիւն ապահովելով...<sup>36</sup>:

**Ամփոփում**

Թորոս Ռոսլինի «Տեառնընդառաջ» մանրանկարի բոլոր դիտարկուած կերպարներն ու խորհրդանշանները ցոյց են տալիս, որ սա Ղուկասի աւետարանի համապարզ վերապատումը չէ: Մանրանկարի պատմողական կողմից գատ՝ կայ նաեւ խորհրդաբանականը՝ սիմվոլների օգնութեամբ բացայայտուող պատկերի ներքին իմաստը, որը խօսում է Մեսիա-Փրկչի՝ Յիսուս Քրիստոսի ծառայական կերպերի մա-

սին: Նա Թագաւոր է, Մարգարէ եւ Քահանայապետ: Երկնքի եւ երկրի՝ Հոգեւորի ու նիւթականի արարիչն ու տէրը՝ Թագաւորը, գալիս է երկիր, մարգարէանում-աւետարանում է արարածի փրկութեան մասին եւ յանուն այդ փրկութեան, որպէս մշտնջենական Քահանայապետ, զոհաբերում է ինքն իրեն: Իսկ զոհաբերութիւնը կատարուելու է խաչի վրայ: Դա է ակնարկում մանրանկարի պատկերաստեղծական-յօրինուածքային, ուղղահայեաց ու հորիզոնական խաչածելը: Ուրեմն, մանրանկարը ոչ միայն քառասուն օրական Յիսուսի՝ Երուսաղէմի տաճար գալու մասին է, ոչ միայն բացայայտում է Յիսուսի ով լինելը, այլեւ անդրադառնում է խաչի խորհրդին:



36 Եբր., էջ 23-24, 27, Թ 12